

ՄԵԴԻԱՑԻԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԵՂԵՑԻԿ

ԳՊՀ դասախոս,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քրեական դատավարության ամբիոնի դասախոս

e-mail: gexecik_vardanyan@mail.ru

ՏԵՐ-ՎԱՍՊԱՐՅԱՆ ԱՍՏԴԻԿ

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
իրավագիտություն բաժնի մագիստրատուրայի

երկրորդ կուրսի ուսանողուհի

e-mail: astgh9696@mail.ru

Հոդվածի հիմնական նպատակը Հայաստանի
Հանրապետությունում մեդիացիայի ինստիտուտի ներդրման
հիմնախնդիրների ուսումնասիրությունն է: Խնդիր է դրվել բացահայտել
մեդիացիայի ինստիտուտի սոցիալ-իրավական էությունը,
առանձնահատկությունները միջազգային փորձի օրինակով, ներկայացնել
ուսումնասիրվող ինստիտուտների կարևորությունն ու արդիականությունը
արդարադատության արդյունավետության բարձրացման գործում և
առաջարկել տեսական լուծումներ: Օգտագործվել են վերլուծական,
իրավահամեմատական մեթոդները, որոնց կիրառմամբ ուսումնասիրվել են
Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, ինչպես նաև
օտարերկրյա իրավական համակարգում ու իրավակիրառ պրակտիկայում
գործող սկզբունքները և տեսաբանների հեղազոտությունները:
Արդյունքում՝ հանգել ենք այն եզրակացության, որ Հայաստանում
մեդիացիայի ներդրումն անհրաժեշտություն է: Այն հնարավորություն
կընձեռի նվազեցնելու դատարանների ծանրաբեռնվածությունը,
կրճատելու պետական, դատական ծախսերը: Սկզբնական
ժամանակահատվածում ինստիտուտի ներդրումը կարող է իրականացվել
միջազգային փորձից ելնելով, հետագայում Հայաստանի
Հանրապետությունում ինստիտուտի զարգացմամբ պայմանավորված,
ծագած խնդիրները լուծելու ու բացերը լրացնելու անհրաժեշտությունից
ելնելով կլրացվեն ու կփոփոխվեն մեդիացիայի ինստիտուտի կիրառման
ընթացակարգերը:

Բանալի բառեր՝ մեդիացիա, միջնորդություն, սկզբունք, մեդիացիայի սուբյեկտ, միջազգային փորձ, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ, իրավակիրառ պրակտիկա:

Վերջին տասնամյակների ընթացքում հանցագործությունների դեմ պայքարի ավանդական միջոցների և մասնավորապես միայն պատժի ինստիտուտի կիրառումը հանգեցրին նրան, որ մասնագիտական շրջանակներում հաճախակի դարձան քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների կիրառման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկությունները:

Քրեաիրավական վեճերի լուծման արդյունավետ միջոցների որոնման արդյունքում ձևավորվեց հանցագործությանը հակազդելու նոր հայեցակարգ, որը կոչվում է «վերականգնողական արդարադատություն»: Վերջինիս նպատակը նոր՝ վերականգնողական միջոցների կիրառումն է՝ որպես հակազդեցություն քրեական արդարադատության առավելապես պատժողական ուղղվածությանը:

Վերականգնողական արդարադատությունը համարվում է նոր հարացույց (պարադիգմա), որը հակադրվում է զուտ պատժական արդարադատության հայեցակարգին: Ի տարբերություն վերջինի՝ վերականգնողական արդարադատությունը հանցագործությանը հակազդում է ոչ թե պատժի, այլ կողմերի հաշտության և վնասի հատուցման միջոցով: Քրեաիրավական վեճերի լուծման այս նոր միջոցը հիմնված է փոխհամաձայնության, փոխադարձ զիջումների, այլ ոչ թե առճակատման հիման վրա, ինչպես ավանդական արդարադատությունում:

Այսօր աշխարհում գործում են վերականգնողական արդարադատության տարբեր ծրագրեր, որոնց շարքում առանցքային տեղ է զբաղեցնում միջնորդությունը կամ մեդիացիան՝ որպես հատուկ կազմակերպվող ընթացակարգ: Դատաիրավական իմաստով մեդիացիան ընդունված է համարել վերականգնողական արդարադատության ինստիտուտ:

Վերականգնողական արդարադատությունը հիմնվում է երեք հիմնական սկզբունքների վրա:

Առաջին սկզբունքի համաձայն՝ վերականգնողական արդարադատությունը հանցագործությունը դիտում է նախևառաջ որպես վնաս հասցնող, տուժողին կորուստներ պատճառող արարք, այլ ոչ թե առաջին հերթին քրեական իրավունքի նորմի խախտում: Այսինքն՝ վերականգնողական արդարադատության գաղափարի հիմքում ընկած է այն մոտեցումը, որ հանցագործությունը, լինելով ոտնձգություն կոնկրետ անձանց նկատմամբ,

չպետք է դիտարկել որպես արարք, որն ունի միայն հանրային վտանգավորություն: Վերականգնողական արդարադատության անկյունաքարն է տուժողի պահանջների բացահայտումը և դրանց հաշվառումը: Կարևորը պատճառված նյութական վնասի հատուցումն է:

Երկրորդ հիմնարար սկզբունքն է իրավախախտի կողմից իր կատարածի համար պատասխանատվություն կրելը և կոնկրետ գործողություններ ձեռնարկելը պատճառված վնասի հատուցման ուղղությամբ:

Երրորդ սկզբունքի իմաստն այն է, որ գործին առնչվող կողմերը հնարավորություն ունեն արտահայտվելու: Դա վերաբերում է ոչ միայն հանցագործին և տուժողին, այլև բոլոր անձանց, որոնց հանցագործություն կատարած անձի գործողությունները այս կամ այն կերպ առնչվել են: Այդ անձինք իրավունք ունեն ակտիվորեն մասնակցելու վերականգնողական արդարադատության գործընթացին¹:

Թեև երրորդ կողմի օգնությամբ հաշտեցման գործընթացը հայտնի է դեռևս հնագույն ժամանակներից, այդուհանդերձ մեդիացիան այժմեական տեսքով առաջացել է անցյալ դարի երկրորդ կեսին և արագ տեմպերով ձեռք է բերել վեճերի լուծման ամենաարդյունավետ և ամենաարագ ձևերից մեկի «կարգավիճակ»:

Այսպիսով, մեդիացիա ասելով՝ հասկանում ենք կամավորության և գաղտնիության սկզբունքի վրա հիմնված գործընթաց, որի ընթացքում կասկածյալին, մեղադրյալին և տուժողին հնարավորություն է տրվում ոչ շահագրգիռ միջնորդի աջակցությամբ լուծելու հանցագործության հետևանքով ծագած վեճը և վերականգնելու տուժողի խախտված իրավունքները²:

Մեդիացիայի սուբյեկտներն են մեդիատորը, այսինքն՝ այն անկախ անձը, ով նշանակված է կողմերի կողմից կամ կողմերի խնդրանքով և աջակցում է վեճի լուծմանը մեդիացիայի միջոցով:

Կողմերն այն անձինք են, որոնք ներգրավված են վեճի շրջանակներում և ցանկանում են լուծել իրենց վեճը մեդիացիայի միջոցով:

Մեդիացիայի մասնակիցներն այն անձինք են, որոնք կողմերի և մեդիատորի համաձայնությամբ մասնակցում են մեդիացիային:

Հատկանշական է, որ մեդիացիան հարյուրավոր տարիներ առաջ կիրառվել է Չինաստանում և ասիական-խաղաղ օվկիանոսյան տարածաշրջանի այլ երկրներում: Մինչև այժմ մեդիացիան ամենատարածված

¹ Տե՛ս Платек М. Востановительное правосудие – теория, порожденная практикой. Альманах. 2005/4. էջ. 25.

² Տե՛ս Ղամբարյան Ա., Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարությունում, գիտագործնական ձեռնարկ XVI, Երևան, 2010, էջ 33:

մեթոդներից է Չինաստանում և Ճապոնիայում, որտեղ դատական գործընթացները համարվում են առավել անցանկալի, քանի որ դատարանում վեճերը դուրս են հանվում ներքին իրավահարաբերությունների շրջանակներից և թույլ չեն տալիս կողմերի միջև նորմալ հարաբերությունների հաստատումը:

Հին Չինաստանում և Ճապոնիայում միջնորդության ընթացակարգը վեճերի կարգավորման գլխավոր միջոցն էր: Մեդիացիան այսօր էլ օգտագործվում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում «հաշտեցման Ժողովրդական կոմիտեներում»: Հատկանշական է, որ 2008 թվականին Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում միջնորդության մասին օրենք է ընդունվել: Անտիկ Հունաստանում հակամարտությունները քաղաքների և պետությունների միջև կարգավորվել են երրորդ անձանց միջնորդությամբ: Փոքր հունական քաղաքները հանդես են եկել որպես միջնորդ խոշոր քաղաքների՝ Աթենքի և Սպարտայի միջև հակամարտություններում¹:

Մինչև վերջին ժամանակներս մեդիացիան լայնորեն կիրառվել է միջազգային հանրային իրավունքի բնագավառում՝ պետությունների միջև հարաբերությունների կարգավորման նպատակով: Վեճերի կարգավորման նպատակներով վերջին տասնամյակում մեդիացիան կիրառվում է նաև միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում: Ընդ որում տարբեր երկրներում գործում են մեդիացիայի կիրառման տարբեր իրավական հիմքեր: Մի դեպքում մեդիացիայի կիրառման հիմքերը ամրագրված են դատավարական նորմերով, մեկ այլ դեպքում՝ նյութական իրավունքի ակտերում: Որոշ երկրներում ընդունվել են մեդիացիոն ծառայության մասին առանձին օրենքներ, որոշ պետություններում մեդիացիայի ընթացակարգը սահմանել են դատավարության օրենսգրքերում և այլն:

Դեռևս 1996թ.-ից մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունում գործում են մեդիացիայի կանոնները, իսկ Միջազգային առևտրային պալատում 1988թ.-ից գործում է Հաշտեցման խորհուրդ: Հատկանշական է, որ 1986թ.-ին Յյուրիխի առևտրային պալատն ընդունել է հաշտարարական կարգավորման փոքրածավալ գործընթացներին համապատասխան կանոններ: Այսպիսի կարգավորող դրույթներ սահմանված են նաև մի շարք հայտնի ազգային առևտրային արբիտրաժային գործող կենտրոններում, ինչպիսին, օրինակ, Ստոկհոլմում²:

¹ Տե՛ս Бесемер Х., Маловой Н. В. / Медиация: посредничество в конфликтах, Калуга, Духовное познание, 2004, էջ 55:

² Տե՛ս «Արդարադատություն» գիտական հանդես, 3 (26) 2014թ., էջ 29:

Մեդիացիան՝ որպես կողմերի միջև ծագած վեճերի կարգավորման մեթոդ, ճանաչված է ՄԱԿ-ի կանոնադրությամբ: Ի սկզբանե մեդիացիայի հիմքերը դրվել են ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և Ավստրալիայում, ավելի ուշ՝ նաև եվրոպական մի շարք երկրներում, ընդ որում ամերիկյան ընկերություններն աշխատում են վեճերի այլընտրանքային կարգավորման եղանակները տարածել նաև Միացյալ Նահանգներից դուրս: Այդ գործընթացում մեծ դերակատարություն ունի Ամերիկյան իրավաբանների ասոցիացիան, որի հետ համագործակցում են բազմաթիվ միջազգային կազմակերպություններ: Արդյունքում ընդունվել են հաշտարարական գործընթացների կարգավորումը նախատեսող հատուկ կանոններ, մեդիացիոն գործընթաց կազմակերպելու ընթացակարգեր:

«Քրեական գործերում մեդիացիայի մասին» Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի N R(99) 19 հանձնարարականում մեդիացիան բնութագրվում է որպես ճկուն, մատչելի, կողմերի ներգրավմամբ վեճի լուծմանն ուղղված միջոց, որը համարվում է որպես ավանդական քրեական դատավարության լրացում կամ այլընտրանք:

Այս տեսանկյունից հետաքրքրություն կարող են ներկայացնել Բելգիայի օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Բելգիան այն եզակի երկրներից է, որի օրենսդրությամբ մեդիատորի դերում հանդես է գալիս դատախազը: Բելգիայի օրենսդրության համաձայն՝ դատախազը քրեական հետապնդում հարուցելու հարցը որոշելիս, ելնելով քրեական հետապնդման նպատակահարմարությունից, կարող է նախաձեռնել հաշտության կազմակերպում: Ընդ որում հենց դատախազի վրա է դրված մեդիացիայի անցկացումը: Դրա համար Բելգիայում ստեղծվել է մեդիացիայի համար պատասխանատուի պաշտոն, որը համարվում է դատախազի առաջին օգնականը: Բացի դրանից՝ դատախազության համակարգում ստեղծվել են հատուկ պաշտոններ՝ մեդիացիայի գծով խորհրդականների և օգնականների համար: Առաջինները պետք է ունենան կրիմինոլոգի, իսկ երկրորդները՝ սոցիոլոգի մասնագիտություն:

Վերջին ժամանակներս Հայաստանի Հանրապետությունում քննարկվում են անցումային արդարադատության ներդրման, դատարանների աշխատանքի արդյունավետության բարձրացման, դատավորների վեթիքների, դատարանների նկատմամբ հասարակության վստահության ամրապնդման հիմնահարցերը, որոնք, կարծում ենք, լուրջ գիտական հիմնավորման կարիք ունեն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված են այն չափանիշները, որոնց առկայության դեպքում անձը կարող է նշանակվել

դատավորի պաշտոնում¹: Սակայն, կարծում ենք, որ տարիքային ցենզը, քաղաքացիությունը, ընտրական իրավունք ունենալը, բարձր մասնագիտական որակները, մասնագիտական փորձն ու բարձրագույն կրթությունը չեն կարող ինքնին վկայել դատավորի արհեստավարժության ու անկողմնակալության, դատական համակարգի արդյունավետության մասին: Դատավորը նույնպես մարդ է, ում գործողությունները չեն կարող արդյունավետ լինել և հանրային վստահություն վայելել, եթե դատավորը մեկ օրում կարող է մի քանի դատական նիստ հրավիրել և գործ քննել: Դատարանների ծանրաբեռնվածությունը բացասաբար է ազդում դատական համակարգի արդյունավետության վրա: Դրանից էլ բխում են դատական ակտերում թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, ուստի և դատական ակտերի բողոքարկումները, միևնույն գործի քննության ու լուծման համար դատական համակարգի երկու կամ երեք աստիճանի ներգրավումը: Այս և այլ խնդիրներն իրենց լուծումը կգտնեն, եթե հնարավորինս նվազեցվի դատական համակարգի ծանրաբեռնվածությունը, իսկ դրա լավագույն մեթոդներից մեկն էլ հենց **մեդիացիայի** ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունն է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, որը զգալիորեն կնվազեցնի

1. դատական համակարգ մուտք եղած գործերի քանակը,
2. կբարձրացնի դատական համակարգի աշխատանքի արդյունավետությունը,
3. կնվազեցնի դատական ծախսերը,
4. կնվազեցնի քրեակատարողական հիմնարկների ծանրաբեռնվածությունը,
5. զգալիորեն կկրճատի պետական ծախսերը,
6. հասարակությունում կնվազի դատվածություն ունեցող անձանց թիվը:

Մեդիացիայի առավելություններից է նաև այն, որ կողմերը ակտիվորեն մասնակցում են մեդիացիային և ներգրավվում են որոշում ընդունելու գործընթացին: Մեդիացիայի ողջ ընթացքում գաղտնիության պահպանումը և ցանկացած կոռուպցիոն ռիսկերի բացառումը դարձրել են մեդիացիան վեճերի լուծման ամենահայտնի ձևերից մեկը:

Ինչպես ցույց են տալիս մի շարք արտասահմանյան երկրների պաշտոնական վիճակագրական տվյալներ, 60-80% դեպքերում մեդիացիայի միջոցով վեճերը լուծվում են 1-2 օրվա ընթացքում:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015թ. ,հոդված 165:

Հատկանշական են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 73-րդ¹ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 36-րդ² հոդվածները, որոնք կարծես պարունակում են մեղիացիայի որոշ տարրեր ՀՀ քրեական արդարադատության համակարգում: Թեև անհրաժեշտ է փաստել, որ նախ՝ դասական իմաստով վերոնշյալ նորմերում ամրագրված կանոնակարգումները չի կարելի համարել մեղիացիա, քանի որ այստեղ բացակայում են մեղիացիային բնորոշ հիմնական տարրերը՝ երրորդ անկախ կողմ, արտադատական ընթացակարգ և այլն: Այն կարելի է համարել, այսպես կոչված, «սովորական» մեղիացիա, քանի որ այս դեպքում օրենսդրությունը ոչ միայն չի սահմանում նորմ՝ հաշտեցնելու համար երրորդ կողմի ծառայությանը դիմելու վերաբերյալ, այլև վարույթն իրականացնող մարմինները նույնիսկ չունեն տուժողին և հանցանք կատարած անձին հաշտեցնելու պարտականություն: Նրանք ընդամենը պարտավոր են տուժողին կամ հանցանք կատարած անձին բացատրել նրանց իրավունքը հաշտվելու դեպքում հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին:

Երկրորդ՝ հիշյալ նորմերը գործնականում չեն կարող պատշաճ ապահովել կողմերի միջև հաշտության համաձայնության կայացումը դատավարական և այլ անհրաժեշտ կառուցակարգերի բացակայության պատճառով: Ավելին, դրանցում առկա են այնպիսի կանոնակարգումներ, որոնք ուղղակիորեն հակասում են «Քրեական գործերով մեղիացիայի մասին» Նախարարների կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի N R(99) 19 հանձնարարականի հիմնական սկզբունքներին:

Հայաստանում այսօր մասնավոր մեղիացիա է իրականացնում «ԷյԴիԱր Փարթենըս» ընկերությունը: Այս ընկերությունը մեղիացիայի ոլորտում մասնագիտացած հայաստանյան միակ կազմակերպությունն է, որը նաև մասնակցում է օրենքի նախագծի մշակման գործընթացին:

Մեղիացիայի ինստիտուտը կարող է կիրառվել նաև նոտարական ծառայության կողմից, որը կնպաստի քաղաքացիաիրավական բնույթի վեճերի արտադատական լուծմանը:

Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ նոտարը անվիճելի իրավասության մարմին է, կարող է (իրավասու է) քաղաքացիական իրավունքների պաշտպանության ոլորտում վեճերի կրճատմանն ուղղված որոշակի գործառույթներ ստանձնել³:

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական» օրենսգրքը ՀՕ-528-Ն:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության» օրենսգրքը ՀՕ-248:

³ Տե՛ս «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ և 81.1 հոդվածները, 19.10.2016թ., (ՀՕ-180-Ն):

Մեդիատորների դերում նոտարների արդյունավետության մասին վկայում է Գերմանիայի պրակտիկան: Այստեղ մեդիացիայի անցկացումը դիտվում է որպես նոտարների ծառայողական գործունեության ուղղություններից մեկը, այսինքն՝ այն իրավական վեճի մասնակիցներին որակավորված իրավաբանական օգնություն ցուցաբերելու միջոց է: Գերմանիայում նոտարները մեդիատորների գործառնություններն իրականացնում են ինչպես անմիջականորեն, այնպես էլ առանձին նոտարական գործողություններ կատարելիս, օրինակ՝ նոտարական վարույթի առանձին փուլում գործարքների վավերացման դեպքում:

Նոտարն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, այլ օրենքների և իրավական ակտերի ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա¹:

Նոտարական գործողություն կատարելիս կամ նոտարական այլ գործունեություն իրականացնելիս նոտարն անկախ է և ենթարկվում է միայն օրենքին²:

Մեդիատորի առաքելությունն այն է, որ համապատասխան գործընթացն իրականացնում է՝ անկախության, անաչառության, գաղտնիության և կողմերի հավասարության ու նրանց համագործակցության սկզբունքները հաշվի առնելով: Այս սկզբունքը որդեգրել են մեդիացիա իրականացնող բոլոր երկրները: Նոտարական կարգով մասնագիտական գործունեության ընթացքում հայտնի դարձած տեղեկությունները նոտարական գաղտնիք են, իսկ այլ անձանց տեղեկություններ տրամադրելու կարգը հստակ սահմանվում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով³: Բովանդակային առումով նոտարական գործունեության ոլորտում մեդիացիայի կիրառումը պայմանավորված է դատական գործընթացների նվազեցման անհրաժեշտությամբ, ինչպես նաև նոտարական գործողության կատարման համար դիմած անձանց միջև ծագած անհամաձայնության կարգավորմամբ: Հայաստանի Հանրապետությունում իրականացված դատական բարեփոխումների հետևանքով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, մասնավորապես «Իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր հաստատելը» վերտառությամբ 17.1 գլխի 81.1-րդ հոդվածում նախատեսվել է, որ «Նոտարը հաստատում է այն փաստերը, որոնցից կախված են քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ

¹ Նույն տեղում, 2-րդ հոդվածը:

² Նույն տեղում, 4-րդ հոդվածի 1-ին կետ:

³ Նույն տեղում, 5-րդ հոդված:

դադարումը»¹: Այս նորմի հիմնական նպատակը դատարաններին նմանատիպ գործերից բեռնաթափելն էր:

Շատ հաճախ տարբեր պատճառաբանություններով նշված փաստերի հաստատումը նոտարի կողմից մերժվում է, և կողմը խնդիրը կարգավորելու համար ստիպված է լինում դիմել դատարան: Սա նշանակում է, որ օրենսդրորեն կարգավորված հարցերը գործնականում լուծում չեն ստանում: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում նոտար-մեդիատորի առկայությունը կարող է իդեալական միջավայր ստեղծել մեդիացիայի զարգացման համար²:

ՀՀ օրենսդրությունը նախատեսում է որոշակի սահմանափակումներ նոտարի գործունեության ոլորտում: Նոտարն իրավունք չունի զբաղվել որևէ այլ գործունեությամբ՝ բացառությամբ մանկավարժական, գիտական կամ ստեղծագործական աշխատանքների: Իսկ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում մեդիացիայի ընթացակարգերի կիրառման դրույթներ, սկզբունքներ դեռևս սահմանված չեն: Վերջինիս վերաբերյալ հիմնական դրույթն ամրագրված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում, ինչպես նաև «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում³, որոնք չեն անդրադառնում նոտարական պրակտիկայում մեդիացիայի ընթացակարգերի կիրառմանը:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մեդիացիայի և նոտարական գործունեության սկզբունքների միասնականությանը՝ մեդիատորի և նոտարի անկախության, անաչառության, ընթացակարգի գաղտնիության ընդհանուր սկզբունքներին:

Հիմնական դրույթները, որոնք վերաբերում են հաշտեցման ընթացակարգին, պետք է ամրագրվեն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի հատուկ գլխում, որը կարող է կոչվել, օրինակ, «Հաշտեցման ընթացակարգ նոտարական վարույթում»: Անհրաժեշտ է նշված գլխում արտացոլել հաշտեցման ընթացակարգի էությունը, նպատակը, հիմքը և կիրառման պայմանները, մեդիացիայի անցկացման կարգի և դադարեցման հիմքերի մասին ընդհանուր դրույթները, նոտարական ծառայությունների վճարման և մեդիացիայի հետ կապված ծախսերի փոխհատուցման

¹ Նույն տեղում, 81.1 հոդված:

² Տե՛ս Ա. Չոբանյան, «Պարտադիր (հարկադիր) մեդիացիայի կիրառման իրավական հետևանքները ՀՀ-ում», «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 106, Երևան, 2018, էջ 26:

³ Տե՛ս «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածները:

առանձնահատկությունները: Օրենքի կառուցվածքի տեսանկյունից հաշտեցման ընթացակարգի մասին գլուխը պետք է տեղ գտնի նոտարական գործողությունների կատարման հիմնական կանոններից հետո:

Այսպիսով, կարծում ենք, որ մեդիացիայի կիրառման ընթացակարգը նոտարական պրակտիկայում անհրաժեշտություն է, որի կիրառումը նոտարական պրակտիկայում կստեղծի վեճերի արագ և արդյունավետ կարգավորման նոր հնարավորություններ:

Մեր կարծիքով՝ ճիշտ կլինի նոտարական ոլորտում մեդիացիոն գործողությունների իրականացման գործառույթը վերապահել համապատասխան վերապատրաստում անցած նոտարներին: Այդպիսով վեճը մասնագիտորեն ճիշտ լուծում կստանա, քանի որ նոտարները կունենան համապատասխան գիտելիք և փորձ:

Օգտագործված գրականություն I. Նորմատիվ իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն, Երևան, 06.12.2015թ.:
2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, 01.08.2003թ.:
3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-248, 12.01.1999թ.:
4. «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ՀՕ-274, 04.12.2001թ.:
5. «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ՀՕ-351-Ն, 13.06.2018:

II. Մասնագիտական գրականություն

1. Ղամբարյան Ա. Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարությունում, գիտագործնական ձեռնարկ XVI, Երևան 2010:
2. «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 106, Երևան, 2018:
3. «Արդարադատություն» գիտական հանդես, 3 (26) 2014:
4. Платек М., Востановительное правосудие – теория, порожденная практикой, Альманах, № 4, 2005.
5. Бесемер Х., Маловой Н. В., Медиация: посредничество в конфликтах, Калуга, Духовное познание, 2004.

PROBLEMS OF IMPLEMENTATION OF MEDIATION IN THE REPUBLIC OF ARMENIA

VARDANYAN GEGHETSIK

Lecturer, Gavar State University,
*Lecturer of the Department of
Criminal Justice of the Academy of the
RA Police Educational Complex*

TER-GASPARYAN ASTGHIK

*2nd-year Master student, Faculty of Humanities,
Department of Jurisprudence, GSU*

The main purpose of the article is to study the problems of introduction of the mediation institute in the Republic of Armenia. The task is to identify the social and legal essence of the mediation institute, especially on the example of international experience, to present the importance and relevance of the studied institutions in improving the efficiency of justice and to offer theoretical solutions. Analytical, comparative-legal methods were used to study the legislation of the Republic of Armenia, as well as the principles and theories of the foreign legal system and legal practice. As a result, we came to the conclusion that the introduction of mediation in Armenia is a necessity. This will reduce the workload of courts, as well as the government and court costs. In the initial period, the introduction of the institute could be based on international experience, as well as on the need to solve problems and fill gaps in the future due to the development of this institute in the Republic of Armenia. The procedures for the application of mediation will be supplemented and modified.

Keywords: mediation, application, principle, the subject of mediation, international experience, legal system of the Republic of Armenia, enforcement practice.

ПРОБЛЕМЫ ВНЕДРЕНИЯ МЕДИАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ВАРДАНЫАН ГЕХЕЦИК

*преподаватель ГГУ,
преподаватель кафедры уголовного судопроизводства академии
Образовательного комплекса полиции РА*

ТЕР-ГАСПАРЯН АСТГИК

*студентка магистратуры второго курса отделения юриспруденции, факультета
гуманитарных наук ГГУ*

Цель статьи-изучение проблем внедрения в Республике Армения института медиации. Поставлена задача выявить социально-правовую сущность и особенности института медиации, с учетом международного опыта, представить важность и актуальность изучаемых институтов в деле повышения эффективности правосудия и предложить теоретические решения. Аналитические и сравнительно-правовые методы применялись при изучении законодательства Республики Армения, а также действующих принципов и исследований теоретиков зарубежной правовой системы и правоприменительной практики. В результате мы пришли к выводу, что введение медиации в Армении является необходимостью. Это позволит снизить нагрузку судов, сократить государственные и судебные расходы. В начальный период внедрение института может осуществляться исходя из международного опыта, в дальнейшем, обусловленное развитием института в Республике Армения, исходя из необходимости решения возникших проблем и восполнения пробелов, будут дополнены и изменены процедуры применения медиации.

Ключевые слова: медиация, посредничество, принцип, субъект медиации, международный опыт, правовая система Республики Армения, правоприменительная практика.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 07.09.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 10.10.2019թ.: